

# Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ



« ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԸ ՏԳՈՅՔ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ » : ԴՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ո Ր Դ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ՅՈՒՆԻՍ 1 . 1875 .

Թ Ի Ի 6



Գուք չէք կրնար կարծել թէ այսպիսի երգով մը զՍտուած փառարանող ժողովուրդ մը կրնայ երբէք զանի մոռնալ : Կիրակնօրեայ դըպրոցի դասերուն մէջ զոր այս տարի սորվեցաք՝ տեսաք թէ ինչպէս Ստուած չառ անգամ օգնեց Իսրայելացւոց, երբ անոնք Քանանու երկիրը կ'երթային, և այս ամիս կը սորվիք թէ ինչպէս Իսրայելի որդիքը կամաց կամաց կուտայաչառ եղան, և թէ անոնց ուխտի տապանակն անգամ Փղշապուց ձեռքն ինկաւ պատերազմի մէջ : Անտեսն Իսրայելացիք

## Շ Փ Ո Ւ Ա Մ

Ինչո՞ք Գրիգորն անձկութեան մէջ է : Հաւերն անոր վրայ կու գան, ինչպէս կը տեսնուի, անոր հացն առնելու համար . Իսկ Գրիգոր վախնալով այնպէս հեռու կը փախչի անոնցմէ, որ կաթք զոր իր ձեռքին մէջ ունի ամանով՝ կը սկսի թափիլ, կատուն ալ զայն ուտելու կը ջանայ : Եթէ Գրիգոր իր ճաշն ուտելը շարունակէր, ոչ հաւերը ոչ ալ կատուն պիտի համարձակէին անոր վրայ յարձակիլ, և ինք այսպէս անձկութեան մէջ պիտի չիյնար : Բայց որովհետեւ Գրիգոր ինք զինք վախկոտ ցուցուց, անոնք յանդուգն եղան, և ինչպէս կը տեսնուի, ի վարձանի Գրի-

գոր իր բոլոր ճաշը պիտի կորսնցնէ : Ոչ միայն Գրիգորի պէս տղայոց, չափահաս մարդոց համար ալ աղէկ կանոն է, 1. քաջասիրտ ըլլալ, և 2. իրենց գործին միտ դնել :

## ԱՍՏՈՒԱԾԱՄՈՒԱՅՈՒԹԻՒՆ

«Ով Տէր, աստուածներուն մէջ քեզի պէս սով կայ. սրբութեան մէջ փառաւորեալ, օրհնութեան մէջ սքանչելի : »

Մովսէս և Իսրայելի որդիքը երգեցին այս երգն Ստուածոյ առջև Եզրիպտացւոց բանակին խղճուելէն ետքը Կարմիր ծովուն մէջ, և անկէ ետքն ալ քանի քանի անգամ պատահութիւն ունեցան զայն երգելու :

վախնալով Սամուէլի վրայ եկան անոր հարցնելու համար թէ ինչ ընեն : Սամուէլ անոնց պատուիրեց թողուլ իրենց կուռքերը և զՍտուած պաշտել անոնք ալ այնպէս ըրին, քանզի տեսան թէ առանց Ստուածոյ բան մը ընելու կարող չէին : Բոլոր այս ժամանակին մէջ անոնց թագաւորը և օրէնադիրները Բարձրեալն Ստուած, բայց ժողովուրդը գոհ չեղաւ ասկէ : Ինչպէս որ անոնք գոհ չէին զՍտուած պաշտել հաւատքով, քանզի զանի չէին տեսներ, ուստի և կուռքեր շինեցին երկրպագութեան համար, նոյնպէս զՍտուած իրենց թագաւոր ունենալու չհաճեցան, և այնպիսի թագաւոր մը ուզեցին զոր կրնային տես-

ներ, Ուստի Իսրայելացոց ազգին մէջ ամենէն բարձրահասակ մարդը եղաւ անոնց թագաւոր : Այսպէս անոնք իրենց թագաւորը զԱստուած այս մարդուն փոխանակեցին :

Ինչ ըսելու ենք ազգի մը համար որ այս կերպով կը մերժէ զԱստուած : Պիտի ըսենք, «Ո՛վ չար ազգ» :

Բայց, սիրելի տղայք, նայեցէք որ դուք ալ այսպէս չընէք : Միայն Իսրայելի որդիքը չեն որ, նեղութեան ժամանակն անցնելուն պէս, կը մտնան Աստուծոյ բարերարութիւնը : Դուք շատ անգամ կիրակի օրեր երգած էք Աստուծոյ փառաբանութիւններ այն փառաբանութեան նման զոր Իսրայելացիք երգեցին, և դըպրոցէն դուրս ելլելէն ետքը շատ անգամ մտցած էք ձեր երգը, երբեմն նաև շատ շուտ մեղք ալ գործած էք Աստուծոյ առջև : Զգուշացէք, տղայք, որ այս աստուածամուտացութիւնը ձեզի սովորութիւն չըլլայ ինչպէս հին Իսրայելացոց եղաւ : Եթէ այսպէս ըլլայ, դուք անպատիւ ըրած կ'ըլլաք Քրիստոնեայ անունը որով կը կոչուիք : Հին տները, երբ Աղեքսանդր մեծ, Մակեդոնիայ թագաւորն, իր զօրքովն Ասիայ վրայ կը քաշէր, անոր զինուորներուն մէջ Աղեքսանդր անուամբ մարդ մը կար որ շատ վատասիրտ էր : Թագաւորն անոր ըսել տուաւ. «Ես վատասիրտ չեմ, դուն ալ որ իմ անունն ունիս վատասիրտ ըլլալու չես. ուստի կամ քաջասիրտ եղիր ինչպէս որ ես եմ, և կամ անունդ փոխէ» : Այսպէս ալ դուք յիշելով ձեր պարապարտութիւնն առ Քրիստոս կամ անոր նմանելու էք, և կամ փոխելու էք ձեր Քրիստոնեայ անունը :

**ՅԱԿՈՒԲ ԵՒ ՄԱՐԻԱՄ**


Յակոբ և Մարիամ պարտէզին մէջ աւազանի մը քով կը խաղային, և Յակոբ սահելով ջուրին մէջ ինկաւ :

Բայց Մարիամ փոխանակ օգնելու անոր, սկսաւ ձեռուրները շարժել և պոռալ. «Եկէք, եկէք, Յակոբ ջուրին մէջ ինկաւ և պիտի խղզուի» :

Յակոբ աւազանին մէջ խղզուելու վտանգի մէջ չէր, ուստի և ըսաւ Մարիամին, «Ինչու համար փոխանակ օգնելու ինձի, կը պոռաս» :

Մարիամ տեսնելով որ Յակոբ վրտանգի մէջ չէր, պոռալը դադարեցուց

և օգնեց անոր : Յակոբ ջուրէն դուրս ելլելէն ետքը ըսաւ Մարիամին. «Ինձի նայէ, Մարիամ. եթէ ուրիշ անգամ նեղութեան մէջ կը գտնուիմ, նախ օգնէ ինձի, և ապա սկսէ պոռալ կանչել որչափ որ կ'ուզես :



**ԳԵՐԵՉՄԱՆՆՈՅԸ**

Հին Յայնեքը «մեռելոց քաղաք» կը կոչէին գերեզմանոցը : Այս պատկերին մէջ գերեզմանոցը կոստանդնուպոլիս քաղաքէն դուրս է, և երբ որ զայն կը տեսնեմ, կը կարծեմ թէ մեռելոց քաղաքը մեծ է քան կենդանեաց քաղաքը : Աւելի քան 400 տարի է որ հոն մարդիկ կը թաղուին, ամէն շաբաթ մարդ մը : Տէր կամ ծառայ, ծեր կամ երիտասարդ, մայր կամ դուստր, դպրոց դասուց տղայ կամ նորածին մանուկ, ամէն շաբաթ մարդ մը թաղուած է հոն, և մարդ մը դառն արցունք թափած է հոն գերեզմանի մը քով :

Գերեզմանոցը սրբազան տեղ մը կրնայ համարուիլ, վասն զի այնչափ մարդոց մարմիններն ունի իր մէջը, և վասն զի մեզի խորհել կու տայ մահուան մեծ և կարեւոր դաղտնեաց վրայ, զոր Աստուած յայտնի պիտի ընէ այն մեծ օրուան մէջ, երբ մեռելոց այս քաղաքն արթննայ :

Դուք կը խորհիք երբէք մեռելոց վրայ, սիրելի տղայք, երբ գերեզմանատան մէջ կը պտտիք, և կամ քարերուն մէջտեղ փախուրտուկ կը խաղաք : Ես միշտ կը խորհիմ անոնց վրայ, և այս պատճառաւ չեմ ուզեր որ գերեզմանատունը տղոց խաղալու տեղ ըլլայ :

**ՀԻՅՏԵՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍ ՄԸ**

1- Հեթում շատ հարուստ էր, քանզի ունէր ութ հազար հինգ փարանոց, զոր բոլոր տարւոյն մէջ ինչպայժեամբ ստացած էր : Օր մը հայրը տուն դալով անոր մէկ դահեկաննոց արծաթ ստակ մը ցուցուց, որ այն օրուան առուտուրին մէջ արուած էր անոր, Հեթում տեսնելով որ այն ստակը շատ սիրուն էր, հարցուց թէ ինչ կ'արժէր, «Քառասուն փարանոց է», ըսաւ հայրը, Հեթում հօրմէն խնդրեց այն արծաթ դահեկանն ըսելով. «Հայր, ես ութ հազար հինգ փարանոց ունիմ որ քառասուն փարա կ'ընեն, զանոնք քեզի տամ, և այս գեղեցիկ ձեռնակ ստակն ինձի տուր» : Հայրը Հեթումին առաջարկութիւնն ընդունելով, պղծէ ութ հազար հինգ փարանոցներն առաւ, և արծաթէ քառասուն փարանոցն անոր տուաւ :

2- Հետեւալ օրը Հեթում դահեկանը ծոցէն հանելով մինչ կը նայէր և կը մաքրէր զայն աւելի փայլեցնելու համար, ստակը ձեռքէն սահելով տախտակամած յատակին վրայ ինկաւ, և գլորելով դնաց երկու տախտակի բացուածին մէջ ինկաւ այնպէս արագ, որ Հեթում չկրցաւ հասնիլ և բռնել զայն : Հեթում այս տեսնելով շատ դող ելաւ, սկսաւ լալ, և ձեռուրները կը դողային ծեր մարդու մը ձեռուրներուն պէս : Գետինը պառկելով նայեցաւ այն բացուածէն, բայց այնպէս մութ էր ներսը որ բան մը չկրցաւ տեսնել : Գնաց ունելի մը մը բերաւ, և բացուածէն ներս երկնցուց, որպէս թէ ստակը ունելոյն ծայրը պիտի գար, բայց ի զուր : Բացուածն այնպէս նեղ էր որ ունելին ներս կը մտնէր, բայց անով բան մը բռնել հանել անկարելի էր : Սակայն այն բացուածին մօտ տախտակի մը վրայ մեծ կակ ծակ մը կար, և Հեթում անկէ ալ ներս նայեցաւ, բայց դարձեալ բան մը չտեսնելով հնարքը հատաւ և սկսաւ պոռալ : Քիչ մը ետքը հօրեղբայրը զալով հարցուց թէ ինչու համար այնպէս կը պոռար, և երբ իմացաւ պատճառը, ըսաւ թէ արևը բացուածին մէջ ծագեցնելով ստակը կրնայ դիւրաւ տեսնուիլ և հանուիլ : Հեթում չէր տեսներ թէ ինչպէս կարելի էր արևը բացուածին մէջ ծագեցնել, քանզի արևը պատուհանին

Տղայոց Աւետարանի համար

ՄԱՆԿԱՆՊԱՍ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՌՈՏՈՍԹՕ

Այս ընկերութեան նպատակն է աղքատ տղայոց ուսման գործիքի օգնել բարեփոխարար : Առ այժմ ունի 15ի չափ անդամ, որոնց վճարած շաբաթական դումարն է 5 դահեկան . իւրաքանչիւր անդամ շաբաթը 5 փարայ գոնէ վճարելու է . մինչեւ 40 փարայ վճարող անդամ կը դառնուի առ այժմ :

Ընկերութիւնս պիտի ջանայ առ ժամանակ մի փոքրիկ դրամագլուխ մը ձեռք բերելու , և ապա պիտի սկսի իւր նպատակին ծառայել : Ամէն կիրակի առաւօտեան պաշտամունքէն վերջը , ընկերութեանս նախագահը պարոն Վ. Պ. Մովսիսեան թէ անդամներուն և թէ գանուող ոչ-անդամներուն աղօթքի ժողովին պիտի նախագահէ համառօտ բարոզ մը տարով :

Այս գործին յաջողութեանը համար , ամէն այս թերթը կարգացողներուն աղօթքը կը խնդրուի :

Գրագիր ընկերութեանս Բ. Յ. ԳՈՒԶՈՒՔԻՊԱՅԱՆ

ՄՈՒՏԸ ԿԸ ՓԱՅԻ

Կամուրջին վրայ լրագիր ծախող մը օր մը կ'ըսէր թէ լրագիրը նոր ելած էր , մինչ այն իրօք երկու օրուան լրագիր էր : Այս մարդը սուտ կը խօսէր լրագիրը ծախելու համար : Այս բանին վրայ խօսուեցաւ կիրակնօրեայ դպրոցին մէջ : « Տասը փարայի համար սուտ կը խօսիս » հարցուց վարժապետը փոքրիկ Յարութիւնին : « Ոչ » պատասխանեց Յարութիւն : « Հարիւր փարայի համար կը խօսիս » կրկնեց վարժապետը : « Ոչ » ըսաւ Յարութիւն : « Մէծիտիչէի մը համար » հարցուց նորէն վարժապետը , և դարձեալ « Ոչ » պատասխան առաւ : « Հարիւր լիւրայի համար սուտ կը խօսիս » ըսաւ վարժապետը , Յարութիւն չէր գիտեր թէ ինչ պատասխան տար : Հարիւր լիւրան շատ ստակ է , այսինքն տասը հազար դահեկանով մարդ շատ բաներ կրնայ գնել : Մինչ Յարութիւն ասոր վրայ կը խորհէր , անոր մօտ նստող տղայ մը պատասխանեց « Ոչ » « Ինչո՞ւ համար Ոչ » հարցուց վարժապետը : « Վասն զի » ըսաւ տղան , « Հարիւր լիւրան կ'երթայ , բայց սուտը կը մնայ »

Այսչէս է : Սուտ մը կը փակչի , և չեւեր : Թէպէտ ամէն բան կ'երթայ , այս կը մնայ և ծանր բեռ է : « Բոլոր ստախօսներուն բաժինը կրակով ու ծծումբով վառած լիճին մէջ պիտի ըլլայ »

մէկ քովէն միայն կը ճագէր , և սենեկին մէջ չէր գար : Սակայն հօրեղբայրը երկու հայելի բերելով անոնց մին պատուհանին առջև արևին դիմացը դրաւ այնպէս որ ըյսը հայելուոյն զարնելով անկէ սենեկին մէջ ցուցաւ : Անտան հօրեղբայրը պատուիրեց Հեթումին նայիլ բացուածին մէջ , մինչ ինք միւս հայելին ցուցեալ լուսոյն դիմացը բռնեց այնպիսի կերպով մը , որ շողը շիտակ բացուածին վրայ զարկաւ : Հեթում որ , երեսի վրայ գետինը պառկած , մէկ աչքով բացուածին մէջ կը նայէր՝ ըսաւ հօրեղբայրը , « Եողգ քիչ մը ասդին խաղցուր » Երբ շողը խաղաց այն կողմը , Հեթում գոչեց , « Տեսայ , տեսայ , տեսայ » , և ոտք ելլելով սկսաւ ուրախութենէն ոտոտաել : Յետոյ ստակն ունելլով բերուեցաւ լայն ծակին առջև , և սենեկին այն ծակին մէջ երկնցնելով հանեցին ստակը : Երբ Հեթում նորէն ստացաւ իր ստակը , ուրախացաւ իր մէկ դրամը կորսնցնող կնոջ պէս » որ Աւետարանին մէջ առակով մը յիշուած է : Այս դէպքը Հեթումին տեսարանական դասն եղաւ :

« մեծակտուց » կոչուած ընկերասէր թռչնոյն բոյնն է : Ափրիկէի մէջ կը գտնուի այս թռչունը : Այս թռչուններէն հարիւրներ մէկտեղ գալով կը հիւսեն այս բոյնը ծառի մը բոլորտիքը բուսած խոտերէն : Նախ ծառի մեծ ճիւղի մը վրայ կարգաւ բոյներ կը շինեն , և ապա այս կարգին բոլորտիքը կը շինեն ուրիշ բոյներ , որոնք քանի մը տարի ետքը շատ մեծ նալով ծառի վրայ շինուած տան մը սենեակներուն կը նմանին : Խոտը որմէ բոյնը շինուած է՝ այնպէս կը հիւսուի որ ներս անձրև չի կրնար թափանցել , բայց թռչունները խոտին մէջէն երկայն ճամբաներ կը բանան բոյնէ բոյն անցնելու : Երբեմն երկու կամ երեք հարիւր բոյն կայ այս խոտեղէն մեծ տան մէջ :



Հիմա տես « մեղրահաւ » կոչուած թռչնոյն բոյնը որ փոքր բայց ինչ գեղեցիկ է : Կաղնապտղոյ բաժակին նման է , բայց շինուած է խիտ հիւսուած բամբակէ կամ փետուրներէ , վարդեհեւոյ մը ճիւղին վրայ :

Միւս բոյնը զոր կը տեսնէք այսանդամ « ցախօտրեկ » կոչուած թռչնոյն է , և թագուցուած է նոճուոյ ճիւղերուն մէջ և այնպէս ծածկուած է այն ճիւղերով որ ոչ ցուրտ և ոչ անձրև կրնայ ներս թափանցել :



Բան մը կայ զոր կրնանք լաւ յիշել քիչ մը խորհելէն ետքը թէ ինչ զարմանալի տուններ շինել սորվեցուցած է Աստուած թռչուններուն . և մեր յիշելու բանը սա է թէ ինչ անգթութիւն և չարութիւն է գողնալ թռչնոց բոյները , երբ անոնք դեռ կը բնակին անոնց մէջ :



ԱՆՁՈՒՍԳՈՐԾ ՏՈՒՆԵՐ Թռչնոց բոյներուն մէջ ամենէն զարմանալիներէն մէկն է այն որուն պատկերը հաս դրինք : Այս բոյնը

Չ Ս Պ Ա Ս Ե Մ

1. Հիմա Յիսուսի պիտի երթամ, չսպասեմ, Սուրբ Հոգւոյն ձայնին մտիկ ընեմ, Տէրը կ'ընդունէ զիս, Պիտի չմերժէ զիս.

Պիտի չ - մեր - թէ զիս. Հիմա Յիսուսի պի - տի եր - թամ, չսպասեմ, Սուրբ Հոգւոյն ձայնին մտիկ ընեմ.

1. Հիմա Յիսուսի պիտի երթամ, չսպասեմ, Սուրբ Հոգւոյն ձայնին մտիկ ընեմ, Տէրը կ'ընդունէ զիս, Պիտի չմերժէ զիս. Հիմա Յիսուսի պիտի երթամ, չսպասեմ, Սուրբ Հոգւոյն ձայնին մտիկ ընեմ.

2. Յիսուսի աղօթք պիտի ընեմ, չսպասեմ, Օրհնութիւնը ամէն օր խնդրեմ. Ուրիշներ օրհնած է, Չիս քաջաւերած է. Յիսուսի աղօթք պիտի ընեմ, չսպասեմ, Օրհնութիւնը ամէն օր խնդրեմ.

3. Յիսուսի համար պիտի սպրիմ, չսպասեմ, Ինք զիս կը կանչէ, մտիկ կ'ընեմ: Այսօր կը կանչէ զիս, Եւ պիտի օրհնէ զիս. Յիսուսի համար պիտի սպրիմ, չսպասեմ, Ինք զիս կը կանչէ, մտիկ կ'ընեմ:

4. Յիսուսի համար պիտի գործեմ, չսպասեմ, Այգիին մէջ ամէն օր գործեմ. Այս, ձեռքերովս, Եւ բոլոր սրտովս, Յիսուսի համար պիտի գործեմ, չսպասեմ, Այգիին մէջ ամէն օր գործեմ:

**ՀՆԴԻԿՆԵՐՆ ԻՆՉ ԿՐ ՊԱՇՏԵՆ**  
 Հնդիկները կուսպաշտ են, և, ինչպէս գիտեք, քարէ և փայտէ և պղնձէ անհետեւ իր կուսքեր կը պաշտեն. կը պաշտեն նաև գետերը որոնց մօտ կը բնակին: Բայց ամենէն այլանդակը սա է որ, տարւոյն մէջ ատեն ատեն կը պաշտեն իրենց արհեստներուն գործիքները: Երկրագործը կը բերէ իր արօրը, խոփը և ուրիշ գործիքները, զանոնք կը դիպէ, և խունկ կը ծխէ, և որից, ծաղիկներ և պտուղներ կը մատուցանէ անոնց: Կը պաշտէ նաև իր արտերուն համար գործածուած աղբին կոյտը, վրան ծաղիկներով և պտուղներով ծածկելով և առջևը կանթեղներ վառելով: Որմնագիրը նոյն պաշտօնը կը մատուցանէ իր ծեփչին, կանոնին և ճարտարապետական լարին. հիւսն ալ իր ուրագին,

սողոցին և խարտոցին որից մատուցանելէն ետքը անոնց առջև կ'իյնայ և կ'երկրպագէ: Նոյնպէս վաճառականը խանարհետով երկրպագութիւն կ'ընէ աթոռին որուն վրայ ամէն օր կը նստի, բսելով. «Ո՛վ աթոռ, ո՛վ պատուական աթոռ, զրկէ ինձի այսօր դատարկ գլխով և լեցուն քսակով առգնողներ:» Փողոցի սափրիչներն անգամ նոյն կերպով աղօթք կը մատուցանեն իրենց ածելիներուն: Այս խեղճ մարդիկը չեն գիտեր թէ Աստուած կը բարկանայ անոնց որ որևէիցէ պատկերի մը առջև երկրպագութիւն կ'ընեն, կամ իրմէ զատ ուրիշ մը կը պաշտեն, և թէ յիմարութիւն կը համարի այսպիսի պաշտօն մը: Անոնք Ամբակում մարգարէին Ա. գլուխ, 16 համարին մէջ նկարագրուած Քաղզէացւոց կը նմանին:

**ԴՅՈՒՍՈՒԹԻՒՆ Է**  
 «Մեծ դժբախտութիւն է ուտելու համար սև հաց միայն ունենալ» կ'ըսէր Յովսէփ օր մը. «ուրիշ մարդիկ իրենց հացին հետ ուտելու ամէն տեսակ աղէկ կերակուր ունին: Դժբախտութիւն է նաև ամէն օր առաւօտուն կանուխ երթալ և աշխատիլ միշտ արեւին տաքութեանը մէջ, մինչ ուրիշ մարդիկ աշխատելու ստիպուած չեն, այլ իրենց ձիերուն վրայ հեծնելով պտտելու կ'երթան երբ որ կ'ուզեն, կամ իրենց տանը մէջ կը նստին, երբ դուրսը շատ տաք է: Երանի՛ թէ ես ալ ազնուական ըլլայի:»

Յովսէփայ հանին (մեծ մայրը) որ ժամանակաւ շատ նեղութիւն կրած էր, ըսաւ. «Մեծ օրհնութիւն է ուտելու հաց ունենալ, մինչ այնչափ մարդիկ ամենեւին ուտելիք չունին. մեծ օրհնութիւն է յարկ մը ունենալ տակը պատասպարուելու, մինչ շատերը ստիպուած են ծառերու տակ և մըզ կիթներու մէջ բնակելու. մեծ օրհնութիւն է զօրութիւն ունենալ աշխատելու, մինչ կան մարդիկ որ հիւանդ են. ողջ այք և ողջ ականջ ունենալ, մինչ այնչափ մարդիկ կոյր և խուլ են:»

«Դուն բնաւ բան մը դժբախտութիւն չես համարիր» ըսաւ Յովսէփ իր հանուոյն միւսնոյն տրտնջող ձայնով:  
 «Կայ բան մը զոր դժբախտութիւն կը համարիմ,» պատասխանեց հանին:  
 «Ի՞նչ է այն» հարցուց Յովսէփ կարծելով թէ վերջապէս հանին ալ անոր արտունջներուն ձայնակից պիտի ըլլար:  
 Բայց հանին ըսաւ անոր. «Տղաս, ես դժբախտ կը համարիմ այն սիրտը որ այսչափ օրհնութեանց համար չնորհակալու չէ:»

Տէրոջը յուսացողները Սիօն լեռանը պէս են, որ չտասանիր, հապա յաւիտեան կը մնայ:

ԱՄՍԱԿԱՆ (Հայերէն, Հյ. և Յն. գրով Տ-ճիւրջ և Պ-ուղբերէն), փութայի ծախքով տարին 1/4 մէճ. 10 հատ, մէկ անձի ուղղուած, 2 1/4 մէճ.:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն  
 Ամբաբի ձ. Ք. ԿՐԻՆ

**ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ**  
 ՏՊԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՍԵԱՆ  
 Ձագմազընար, Յակոբեան խան, Թիւ 12.